

Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻԾԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ղեկոնդ Ալիշանի հսկայածալալ ժառանգութեան մէջ պօհ-զիան (աշխարհաբար պօհզիան) շատ փոքր տեղ է գրաւում: Բայց դրանից նրա գրական հռչակը չի պակասում: Ի վերջոյ Ալիշանը հայ մշակոյթի պատմութեան մէջ մնում է առաջին հերթին իբրեւ բանաստեղծ, ինչը որեւէ չափով չի նուազեցնում նրա հայագիտական գործերի արժէքը: Երէկ հայր Լեւոն Զէքիյեանը շատ լաւ զեկուցում կարդաց Ալիշանի մասին եւ ասաց, որ նրա գրաբար բանաստեղծութիւնները շատ աւելի տաղանդաւոր են, քան աշխարհաբարները: Բայց իրողութիւնն այն է, որ հայ ընթերցողները նրան ճանաչում են աշխարհաբար գործերով: Աբովեանը Վէրքը գրելիս շատ լաւ հասկանում էր, որ աշխարհաբարը դեռեւս մշակուած չէ, իսկ գրաբարը նա շատ էր սիրում: Բայց գերադասեց գրել վէպը աշխարհաբար, որպէսզի այն կարդան յարիւր հազարները... Այնպէս որ առաջին հերթին աշխարհաբար Նահապետի երգերն են միշտ մնալու իբրեւ հայ հայրենասիրական պօհզիայի նուաճումներ: Գրաբար երգերը կուսումնասիրուեն մասնագէտների կողմից, կը հաստատեն Ալիշանի մեծ տաղանդը, բայց երբեք չեն դառնայ այնպիսի սիրուած գործեր, որպիսիք են աշխարհաբար երգերը: Ի միջի այլոց, Ալիշանի բանաստեղծութիւնը պէտք է գնահատել նաեւ այս տեսանկիւնից, իբրեւ Աբովեանի գրքին գուրգահեռ քայլ նոր լեզուի համար մղուող պայքարում:

Իմ այս ելոյթում ես պէտք է փորձեմ հասկանալ Ալիշանի տեղը հայ նոր բանաստեղծութեան մէջ: Բայց նախ ասեմ, որ Ալիշանի ստեղծագործութիւնը դուրս չի մնացել հայ գրականագիտութեան, մասնաւորապէս արեւելահայ գրականագիտութեան ուշադրութիւնից: Դեռ ժամանակին Միքայէլ Նալբանդեանն է անդրադարձել Ալիշանի պօհզիային իր նշանաւոր «Կրիտիկայի» մէջ: Այն բազում անգամներ յիշուել է Ալիշանին նուիրուած աշխատութիւններում, եւ նորից մէջբերումների հարկ չկայ: Բայց մի անգամ եւս յիշենք Նալբանդեանի հիացումը «արժանաւոր վար-

դասպետի» բանաստեղծութիւններով: Ի. դարում Ալիշանի մասին գրել են Ա. Տէրտէրեանը, Ս. Սարինեանը եւ ուրիշներ: Յատուկ ուզում եմ շեշտել Գրականութեան ինստիտուտի երեք վաստակաշատ աշխատակիցների՝ Արամ Ինճիկեանի, Սուրէն Շտիկեանի, Էդուարդ Ջրբաշեանի ուսումնասիրութիւնները (անունները ես յիշեցի նրանց աշխատութիւնների երեւան գալու ժամանակագրութեան հերթականութեամբ): Ինճիկեանը կազմել է Ալիշանի բանաստեղծութիւնների առաջին հայաստանեան ժողովածուն եւ գրել առաջաբանը¹: Նրան է պատկանում նաեւ Հայ նոր գրականութեան պատմութեան հինգհատորեակում Ալիշանին նուիրուած յօդուածը: Սուրէն Շտիկեանը գիրք է գրել Ալիշանի պօէզիայի մասին² եւ բազմաթիւ յօդուածներ: Էդուարդ Ջրբաշեանի ծաւալուն յօդուածը ամենահանգամանալիցն է եղած ուսումնասիրութիւնների մէջ, որում Ջրբաշեանը Ալիշանին դիտում է ժամանակի եւրոպական բանաստեղծութեան համապատկերում³: Այս բոլոր գործերը, նրանց հեղինակների վաստակը այսօր պէտք է յիշել վասն արդարութեան. առանց դրանց Ալիշանի մասին մեր պատկերացումները խիստ պակասաւոր պէտք է լինէին:

Եւ այսպէս, ի՞նչ տեղ է գրաւում Ալիշանի աշխարհաբար բանաստեղծութիւնը հայ պօէզիայի զարգացման շղթայում:

Երեւի իրաւունք ունենք ասելու, որ Ալիշանը սկիզբ դրեց հայոց նոր գրականութեան մէջ հայրենասիրական պօէզիային (չմոռանալով «Տէ՛ր, կեցո դու գեայս...»ը, Վանանդեցու «Հայաստան, երկիր դրախտավայր...»ը եւ այլ բանաստեղծութիւններ):

Հայրենասիրական պօէզիան երեւոյթ դարձաւ հայ իրականութեան մէջ իրապէս Ալիշանի «Երգք նահապետի»ի շնորհիւ: Սա չափազանց կարեւոր հանգամանք է արժանաւոր վարդապետի գրական վաստակը գնահատելու համար: Հայ նոր պօէզիայի զարգացման ընթացքում հայրենասիրական պօէզիային շատ կարեւոր տեղ էր վիճակուած: Թէեւ նախընթաց (միջնադարեան) ողջ բանաստեղծութիւնը կարծես թէ հող էր նախապատրաստել այսպէս կո-

1 ՂԵԻՈՆԻ ԱԼԻՇԱՆ, *Նուագներ*, կազմեց եւ առաջաբանը գրեց՝ Ա. Ինճիկեան, Երևան 1957:

2 ՇՏԻԿԵԱՆ Ս., *Ալիշանի գեղարուեստական ստեղծագործութիւնը*, Երևան 1957:

3 ԶՐԱՄՇԵԱՆ ԷՒ., *Ղեւոնդ Ալիշանի «Երգք նահապետի» բանաստեղծական շարքը եւ նրա գեղարուեստական միասնութիւնը*, Ի Բանբեր Երևանի համալսարանի, 1982, 2 (47):

չուած անհատական քնարերգութեան համար՝ սէր, բնութիւն, կեանք ու մահ եւ այլն, բայց ժԹ. դ. առաջին մի քանի տասնամեակներում, արեւելահայ բանաստեղծութեան մէջ՝ մինչեւ դարի վերջին երկու-երեք տասնամեակները, գլխաւորը հայ բանաստեղծութեան մէջ եղաւ հայրենիքի ճակատագիրը: Նախանցեալ դարի քառասնական թուականներին, երբ սկսեցին գրուել եւ տպագրուել Նահապետի երգերը, հայ պօէզիայում հայրենասիրական այլ բանաստեղծութիւններ, որոնք լուրջ ազդեցութիւն ունենային հայ մտքի եւ հոգու վրայ, դժուար է յիշել:

Այն, որ Ալիշանը չէր եղել Հայաստանում, բայց գրեց իր անկեղծ բանաստեղծութիւնները Հայաստանի մասին, շատ հետաքրքրական փաստ է: Նա Հայաստանը գիտէր միայն գրքերով. նրա հայրենասիրութիւնը այս իմաստով գրքային հայրենասիրութիւն է, որն ընդհանրապէս բնորոշ էր հայ բանաստեղծութեան այդ շրջանին: Որիչ կերպ այդ հայրենասիրութիւնը մենք կարող ենք անուանել նաեւ հոգեւոր հայրենասիրութիւն, որովհետեւ այդ զգացմունքը ծնունդ էր առել ոչ թէ հայկական հողից ու կեանքից, այլ մի բոլորովին այլ, գրքային կամ հոգեւոր միջավայրում: Սա հայկական հայրենասիրական բանաստեղծութեան հետաքրքրական առանձնայատկութիւններից է: Ի վերջոյ, ե՛լ Նալբանդեանը, ե՛լ Պատկանեանը, թէեւ եղել էին Հայաստանում, բայց իրական Հայաստանը նրանք գիտէին միայն մակերեսօրէն, նրանց զգացմունքները եւս սնուում էին գրքերից, գրքերում եղած պատմութիւնից: Պատահական չէ, որ Ալիշանի բանաստեղծութիւններում ներկայ են ե՛լ Մովսէս Խորենացին, ե՛լ Եղիշէն իրենց գրքերով եւ հերոսներով: Պատահական չէ նրա բանաստեղծութիւններում Մովսէս Խորենացու տողով սկսուող բանաստեղծութիւնը՝ «Ողբամ գեգ, Հայոց աշխարհ»: Իր ոգեւորութիւնը նա առնում է այս գրքերից, նրանց նկարագրած իրականութիւնից եւ բուն ոճից ու խօսքից: Իր երիտասարդական յօդուածում, ինչպէս յայտնի է, Թումանեանը խօսում է այս մասին:

Բայց Ալիշանի առիթով աւելի կարեւոր է նկատի առնել, որ Ալիշանի ստեղծագործութիւնը խոր ազդեցութիւն թողեց յետագայ հայ հայրենասիրական բանաստեղծութեան վրայ: «Պլպուլն Աւարայրին» ծնեց «Քաջ Վարդան Մամիկոնեանի մահը»: Ալիշանը զգացել էր ժամանակի պահանջը, ինչպէս դա զգաց Ռափայէլ Պատկանեանը: Այսինքն, հայ հայրենասիրական բանաստեղծութեան առաջին շրջանը պէտք է լինէր հէնց այդ «գրքային» հայրենասիրութիւնը: Բուն Հայաստանը այն վիճակում էր, որ չէր

կարող դառնալ բանաստեղծական ոգեւորութեան աղբիւր (եւ գրական զարգացման միջավայր): Ի վերջոյ, Միխիթար Սեբաստացին սկզբում ուզում էր հիմնադրել իր միաբանութիւնը Սեւանայ կղզում, բայց ստիպուած եղաւ այդ անել Սեւանից շատ հեռու եւ հայ մշակոյթի հետ կապ չունեցող մի այլ կղզում: Սա ժողովրդի ճակատագիրն էր, բայց այդ նոյն իրողութիւնը որոշակի հոգեբանութիւն էր ծնում գրականութեան մէջ՝ նոյն այդ գրքային կամ հոգեւոր հայրենասիրութիւնը, որն, ի հարկէ, ամենաանկեղծ եւ ամենախոր գգացմունքների արտայայտութիւն էր: Առանց այդ գգացմունքների չէր ծնուի Ալիշանի լաւագոյն բանաստեղծութիւններից մէկը՝ «Հրագդաճ, ջրիկդ իմ հայրեճի»: Եւ ոչ միայն այս գործը. բոլոր գործերում կայ անկեղծ գգացմունք չտեսած հայրենիքի հանդէպ: Նորից ու նորից զարմանում ես հայ բանաստեղծութեան այդ առանձնայատկութեան վրայ՝ սիրել հայրենիքը առանց այն տեսած լինելու: Եւ զարմանալին այն է, որ Ալիշանը այնպէս էլ չեղաւ հայրենիքում: Ի միջի այլոց, այս իրողութեան մէջ պէտք է փնտրել նրա հայագիտական եւ գեղարուեստական ժառանգութեան ներքին կապը: Երբեք իր աչքերով հայկական հողը չտեսած Ալիշանը տալիս է Հայաստանի տարբեր մարզերի պատմաաշխարհագրական նախանձեւիօրէն հանգամանալից նկարագրութիւնը: Իսկապէս, զարմանալի է մեր այս երախտաւորի հայրենասիրութիւնը: Գրքերով այնպէս է ուսումնասիրում ու ճանաչում իր հայրենի երկիրը, որ ուրիշները չէին կարող անել իրենց սեփական ոտքերով շրջելով այդ երկրում... Անշուշտ, այս փաստի բացատրութիւնը կարելի է գտնել նրա կենսագրութեան մէջ: Բայց ինչ բացատրութիւն էլ լինի, իրողութիւնն այն է, որ Ալիշանը ապրում էր իր գրքային հայրենիքում, երեւի չցանկանալով իրական տպաւորութիւններով աւերել հայրենիքի իր ստեղծած պատկերի ռոմանտիկական գեղեցկութիւնը: Ի վերջոյ, նա ամբողջ կեանքում վենետիկում փակուած չէր, եղել է եւրոպական շատ երկրներում, կարող էր եւ Հայաստան գալ: Բայց չեկաւ: Ռոմանտիկական պօզգիայի սկզբունքները այս դէպքում միանգամայն հարազատ էին Ալիշանի գգացմունքներին:

Ի վերջոյ, հնարաւոր չէ օրինաչափութիւն չտեսնել այն բանում, որ Ալիշանը բանաստեղծական խօսքով նկարագրում էր այն հայրենիքը, որն անսահմանօրէն սիրում էր, բայց որը չէր տեսել եւ պատմական այն իրադարձութիւնները, որոնք տեղի էին ունեցել իր աշխարհ գալուց շատ առաջ: Հեռաւոր պատմութեան մասին, մանաւանդ հայ բանաստեղծութեան մէջ, շատերն են գրել: Բայց Ալիշանի դէպքում դա մի քիչ այլ իմաստ էր ստանում:

Հէնց այդ հեռաւորութիւնն էր ապահովում ռոմանտիկական այն լուսապսակը, որ կար Ալիշանի հերոսների եւ նկարագրած դէպքերի շուրջ: Այս մասին հանգամանօրէն գրել է էդ. Ջրբաշեանը իր ուսումնասիրութեան մէջ⁴: Այդ լուսապսակը Ալիշանի հայրենասիրութեան անբաժանելի գիծն էր, որը իր ճաճանչները փռում էր մինչեւ նրա պատմա-աշխարհագրական եւ բանասիրական ուսումնասիրութիւնները: Չկար Ալիշանի հայրենասիրութիւնը առանց այդ լուսապսակի, իր հայրենիքի պատմութիւնն ու աշխարհագրութիւնը նա այլ կերպ պատկերացնել չէր կարող:

Ահա այս գիծն է հարազատացնում Ալիշանին եւ Պատկանեանին: Բանը միայն այն չէ, որ այս բանաստեղծները ոգեւորում էին անցեալի հերոսների կերպարներով, նրանց ոգեւորութիւնը աւելի սնունդ էր առնում վառ երեւակայութիւնից, քան իրականութիւնից: Բայց, միևս կողմից, նրանց գործերում յստակ զգացում էր դաստիարակչական գիծը, որն յետագայում իր հաստատումը եւ խորացումը գտաւ հայոց պատմական վիպագրութեան՝ Բաֆֆու, Մուրացանի, ապա նաեւ Դեմիրճեանի եւ միևնների գործերում: Անցեալի հերոսական դրուագները եւ դէպքերը վերակենդանացում էին այս վիպասանների երկերում՝ ժամանակակից երիտասարդութեանը հայրենասիրական ոգով դաստիարակելու համար: Բայց այս համեմատութիւնն անելիս յիշում ենք Պէշիկթաշլեանի գէյթունեան երգերը եւ զարմանքով արձանագրում, որ Ալիշանը չարձագանքեց Չէյթունի ապստամբութեանը: Նախ, որ շատ զբաղուած էր իր հետազօտութիւններով, բայց, թերեւս, աւելի կարեւոր է այն, որ նրա բանաստեղծական-ռոմանտիկական հայեացքը կենտրոնացած էր, Պատկանեանի բառերով ասած, «հիմնիմ դարուց յիշատակ» դէպքերի վրայ: Ի հարկէ, այստեղ պէտք է միշտնք էդուարդ Ջրբաշեանի միտքն այն մասին, որ Նահապետի կերպարը Ալիշանը կապել էր Ժ. Դ. հետ⁵, հետեւաբար, Նահապետը չէր կարող երգել Ժ. Դ. դէպքերը: Բայց բանաստեղծական ոգեւորութիւնը Ալիշանին կարող էր դուրս բերել այդ շրջանակից: Դա չեղաւ՝ մի անգամ եւս մեզ մտածել տալու համար Ալիշանի հայրենասիրութեան տիպի մասին:

Իր այս առանձնայատկութիւններով հանդերձ, Ալիշանի ստեղծագործութիւնը բուռն արձագանքներ ունեցաւ քսաներորդ դարի սկզբի տասնամեակների հայ պօէզիայում: Թումանեանը քննադա-

4 Տե՛ս Ջրբաշեանի է՛ր., նշ. յօդուածը, 25-26:

5 Անդ:

տուժ է Ալիշանի եւ օտարութեան մէջ գրած միւս հայ բանաստեղծների բանաստեղծութիւնները, որոնք կտրուած էին ժողովրդի ուշալ կեանքից, բայց միշտ շեշտում է նրանց մեծ տաղանդը⁶: Եւ առհասարակ չի կարելի չտեսնել Թումանեանի խորին յարգանքը Ալիշանի ստեղծագործութեան հանդէպ: Ալիշանի անունը շատ յաճախ է հանդիպում նրա գրութիւններում: Արդէն խօսուել է Իսահակեանի եւ Ալիշանի յարաբերութիւնների մասին: Բայց հետաքրքրական է յատկապէս Չարենցի վերաբերմունքը Ալիշանի հանդէպ:

Նրա նախորդը՝ Տէրեանը, դիմում է Հայաստանին՝ «Զլլացայ ինդուն փառփիդ Անցեալ ու հիմ փայլով երբեք»: Ու՞մ էր հակադրում Տէրեանը: Ի հարկէ, առաջին հերթին՝ Ալիշանին ու Պատկանեանին: Այսպէս էր սկսում հայկական բանաստեղծութեան մէջ ազգային պատմութեան վերագնահատման ընթացքը: Տէրեանին զարգացրեց ու խորացրեց Չարենցը: Նա ոչ միայն անտարբեր մնաց անցեալի «Խնդուն փառփին», այլեւ ամէն ինչ արեց հայոց անցեալը պսակազերծելու համար: Ինչո՞ւ: Այդ մասին շատ է գրուել: Իսկ ահա Ալիշանի նկատմամբ նրա շատ հետաքրքրական վերաբերմունքի ապացոյց ունենք «Մահուան տեսիլ» պոէմում (Չարենցի պոէմի այս հատուածը, երեւի առաջին անգամ, յիշատակել է էդ. Չրբաշեանը իր յիշուած ուսումնասիրութեան մէջ): Ինչպէս գիտենք, հայոց մօտակայ պատմութեան դէմքերին Չարենցը ներկայացնում է բացասական գոյներով: Բայց հիմա նայենք Ալիշանի բնութագրին: Նրան վերագրուած խօսքերում անկեղծ եւ յուզիչ հայրենասիրութիւն կայ:

Աշխարհում շահող հողմերից այն կղզում ապաստան գտած,
Զգեցած սեւասեւ սեւ՝ եւ տաւիղը սակայն սիրեցի:

Եւ տաւիղը շեփոք դարձրած՝ Բերթուրեան պարտզը մտայ,
Որ կորած հայրենիքս երգեմ եւ անցեալը նրա հրածիմ:

Յետագայ խօսքերում Չարենցը շարադրում է Ալիշանի եւ նրա յետնորդների ազգային-հայրենասիրական պոէզիայի գլխաւոր կէտերը՝ հայոց բերդերի, պատմական յուշարձանների նկարագրութիւնը, ինչպէս ինքն է ասում՝ «Զգտելով հիմ փառքը հայոց սրտերում անմար միշտ պահել»: Սա հէնց այն խնդուն փառքն էր, որ յիշում էր Տէրեանը, որը հեզնում էր Չարենցը «Պատմութեան փա-

6 Տե՛ս ԹՈՒՄԱՆԵԱՆ ՅՈՎՀ., *Երկերի լիակատար ժողովածու*, հատոր վերերորդ, Երեւան 1994, 391, 532 եւ այլն:

ռուղիներում»։ Բերուած եւ յետագայ խօսքերում դեռ հեզնանք չկայ։ Ալիշանի խօսքերում անկեղծ հաւատ կայ հայոց հերոսական պատմութեան հանդէպ։ Բայց յաջորդ քառեակում արդէն յստակ գգացում են «Պատմութեան քառուղիների» տրամադրութիւնները՝

Ասաց – եւ իփեց քնարին ցա մումէ մատներով դեղին,
Աչքերում ամենի մի հուր, մօրուհով մերկութիւնը ծածկած,-
Եւ ձայնը ցրա քնարի, որ ցման էր ձայնին թիթեղի,
Հնչում էր ինչպէս մի հիւանդ, մահամերձ ընկած մանկան լաց։

Ե՛լ թիթեղի համեմատութիւնը, ե՛լ հիւանդ մանկան լացը, ե՛լ հերոսի մօրուհով ծածկուած մերկութիւնը յուշում են Չարենցի բացասական վերաբերմունքը Ալիշանի վաստակի հանդէպ։ Այո, մի կողմից՝ սէր եւ ակնածանք, միւս կողմից՝ բացասական վերաբերմունք։ Տարօրինակ չպէտք է թուայ այս հակասականութիւնը։ Կարծես էր Չարենցը վերաբերում ողջ հայոց պատմութեանը, այդպէս էր վերաբերում եւ Ալիշանի ստեղծագործութեանը։ Մի բան կարող ենք յստակօրէն արձանագրել՝ Չարենցը չէր բաժանում անցեալի հանդէպ Ալիշանի վերաբերմունքը։

Այսպիսով, Ալիշանը եղաւ հայկական հայրենասիրական բանաստեղծութեան սկզբնաւորողը, իր ազդեցութիւնը թողեց այդ բանաստեղծութեան ամբողջ զարգացման վրայ։ Բայց հայոց պատմութեան նրա ընկալումը այդ նոյն բանաստեղծութեան զարգացման ընթացքում արմատականօրէն վերանայուեց յաջորդներէ կողմից, զուգահեռ հայոց հասարակական տրամադրութիւններում կատարուող փոփոխութիւններին։

Ա.ԶԱՏ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

Summary

SOME FEATURES IN FR. GHEVOND ALISHAN'S POETRY

AZAT EGHIAZARYAN

In this article takes into consideration the patriotic poems of Ghevond Alishan, which are written in modern armenian. These poems in fact laid the foundation to the Armenian patriotic poetry. The author of the article considers these songs as expressions of patriotism based on books and studies, because Alishan had never been to Armenia. But in no case this circumstance weakened the sincerity and depth of his patriotism. The article also considers the assessments given by Egishe Charents to the poetry of Alishan.